ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 13-Ն

15/07/2021

ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-013-0242-0060 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի , ՀՀ Կառավարության 23.06.2015թ. թիվ 828-Ն և 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշումների պահանջներով , հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 06.05.2021թ. թիվ 741-Ն որոշմամբ հաստատված Աստղաձոր համայնքում ,,Մոդուլային,, տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ կառուցելու ծրագիրը , ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի , ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան գրությունները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքում ՀՀ Կառավարության կողմից ,,Մոդուլային,, տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ կառուցելու նպատակով , Աստղաձոր համայնքի կողմից հատկացված համայնքային սեփականություն հանդիսացող 6-րդ փողոց թիվ 52 հասցեում գտնվող 05-013-0242-0060 կադաստրային ծածկագրով 0.5144 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակ կառուցապատման է: Առաջարկվում է դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ նշված հողամասը բնակ. կառուցապատման հողերի կազմից փոխադրել հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության :

2. Առաջարկել Աստղաձոր համայնքի ղեկավարի տեղակալին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ գործընթացը արագացված կարգով կազմակերպելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌԱՖԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ**